«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման հիմնախնդիրները

ԱՌԱՐԿԱ - Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ - Անուշ Նալբանդյան

ՄԱՐԶ - Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - ԽՈՐՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Մանկական ուսումնական հաղորդաշարի դերը երեխայի բառապաշարի հարստացման գործընթացում----------6

1.2.Հանելուկները որպես բառապաշարի հարստացման միջոց----------11

1.3. Բառազգացողության ձևավորման գործընթացը բնագրի շուրջ տրվող աշխատանքի ժամանակ----------12

1.4. Բառապաշարի զարգացման մեթոդները----------16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------22

Ներածություն

Մերօրյա կրթվածությունը տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման պայմաններում օրըստօրե ընդարձակվում է՝ ներառելով բազմաբաղադրիչ տարրեր, որոնցում ընթերցանությունն իր ուրույն տեղն ունի: Յուրաքանչյուր շատ ընթերցող աշակերտ, ով տիրապետում է կարդալու որակական հատկանիշներին միանշանակ նա կունենա հարուստ բառապաշար:

Արդի ժամանակներում կրթական համակարգի արդյունավետ միջոցներից է համակարգիչը: Այն համարվում է տեղեկատվության աղբյուր, որի միջոցով կարելի է տեղեկություն ստանալ մեզ հետաքրքրող ցանկացած հարցի վերաբերյալ՝ այդ թվում բառապաշարի:

Հետազոտության թեմայի արդիականությունը.

Մեր ուսումնասիրության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է բառապաշարի զարգացման առանձնահատկություններով և մայրենիի առարկայական ծրագրի պահանջներով և այն հիմնավորվում է նրանով, որ ուսուցման տարրական օղակը անփոխարինելի մի ժամանակահատված է, լավագույնս յուրացնելու մայրենիի բառապաշարի հիմնական ֆոնդը՝ օգտագործելով այդ տարիքի համապատասխան բնական լեզվազգացողությամբ:

Հետազոտության նպատակը.

Հետազոտոտական աշխատանքի նպատակը տարրական դպրոցում բառապաշարի հարստացումն է, որը կարելի է իրականացնել թեմատիկ բառարանների ստեղծման ճանապարհով:

Հատուկ նպատակով ստեղծված բառարաններով նպաստել կրտսեր դպրոցականների՝

- ուղղագրական և ուղղախոսական հմությունների զարգացմանը,
- անսխալ գրավոր խոսք կառուցելու զարգացմանը,
- բառի գործածության ոլորտում գիտելիքների ընդլայնմանն ու հարստացմանը,
- բառակազմական և բառաբացատրական հնարների միջոցով բառապաշարի հարստացմանը:

Հետազոտության խնդիրն է՝

Ուսումնասիրել «Մայրենի 3», «Մայրենի 4» (Ն. Հեքեքյան, Դ. Գյուրջինյան) դասագրքերը:

Հետազոտության մեթոդները.

Դասալսումներ և քննարկումներ, փորձարարական դասերի վարում և առաջադրանքների վերլուծություն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Պայմանավորված են ուսումնասիության հիմնախնդիրների ուղղությամբ տեսական գիտելիքների բացահայտման, յուրացման և գործնականում դրանց կիրառելիությամբ:

Աշխատանքը բազկացած է բովանդակությունից, ներածությունից, 1 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ըստ Աշոտ Տեր-Գրիգորյանի բառապաշարի հարստացումը մի անվերջ գործողություն է, որն սկսվում է երեխայի կողմից շրջապատի աշխարհը ճանաչելու և գիտակցորեն այն ընկալելու առաջին իսկ օրից և անդադրում կերպով շարունակվում է մինչև մինչև նրա կյանքի վերջ, որովհետև ճանաչումն ու ընկալումը հիմնականում տեղի է ունենում բառերի մեջ և բառերի միջոցով: (156, 331)

Կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման միջոցներից են գոյականները, ածականները, բայերը, հոմանիշները, հականիշները, մակդիրները, համեմատությունները դարձվածքները, առած-ասացվածքները, հանելուկները, շուտասելուկները, սուտասելուկները և այլն:

Գլուխ 1: Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման հիմնախնդիրները

1. Մանկական ուսումնական հաղորդակցման դերը երեխայի բառապաշարի հարստացման գործընթացում

Մայրենիի ուսուցումը տարրական դպրոցում կարևոր նշանակություն ունի երեխայի կրթության և դաստիարակության գործընթացում: Մայրենիի հիմնական նպատակներից է երեխայի խոսքի զարգացումը, որի կարևոր բաղադրիչներից մեկը բառապաշարն է: Իսկ առանց դրա չի կարող լինել հարուստ, գեղեցիկ, պատկերավոր և շիտակ խոսք: Ըստ Գյուլամիրյանի բառը լեզվի կարևորագույն միավորն է, առարկայի երևույթի հասկացության, զգացմունքների և այլ նշանակության, իմաստի կրողը: Որքան հարուստ է բառապաշարը, այնքան ընդարձակ են նրա մտքերը ճշգրիտ և արտահայտիչ արտահայտելու հնարավորությունները: (12,79-80)

Օտարաբանության և բարբառաբանության դեմ հաջող պայքարի համար անհրաժեշտ է՝ ամեն մի օտար բարբառային անհարկի բառի դիմաց հանձնարարել հայերենի ճիշտ համարժեքը, որպեսզի սովորողը չզգա այլ բառերի գործածության անհրաժեշտությունը: Աշակերտի ձեռքից վերցնել որևէ անցանկալի, ոչ գրական բառ՝ նշանակում է արմատավորել նրա գրական համարժեքը: (14,64-65) Բառապաշարը լեզվի մեջ մտնող բոլոր բառերի մոտավոր թիվը 300 հազար է, արմատների թիվը՝ 10 հազար: (11,65)

Ըստ բառերի կենսունակության՝ բառապաշարը լինում է գործուն /ակտիվ/ և ոչ գործուն /պասիվ/:

Գործուն բառաշերտի մեջ են մտնում մեր խոսքում օգտագործվող բառերի մեծ մասը, ոչ գործուն բառապաշարի մեջ են մտնում այն բառերը, որոնք հնացել և գրեթե չեն օգտագործվում մեր խոսքում: (11,71-72)

Դպրոց նոր ոտք դնող երեխայի բառապաշարը, որը նա մինչ այդ ձեռք է բերել միջավայրից և որով կարողանում է հաղորդակցվել հասակակիցների կամ մեծերի հետ, երբեմն միայն անհրաժեշտ բառերից կազմված աղքատիկ խոսք է:

Սովորողի բառապաշարը յուրացրած բառերի սոսկ քանակական գումար չէ: Բառերը սովորողի և ոչ միայն ուղեղում գոյություն ունեն որոշակիորեն համակարգված վիճակում՝ իրենց իմաստային կողմով, կիրառական, կազմության և այլ հատկանիշներով:

Երեխան առաջին հերթին հարուստ բառապաշարի միջոցով է ձևակերպում իր մտքերը, հաղորդակցվում արտաքին աշխարհի հետ: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր դեր ունի երեխայի բառապաշարը:

Սովորողների բառապաշարի զարգացման վրա ներգործում են տարբեր աշակերտներ, որոնք կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Այդ պատճառով ուսուցման գործընթացն այնպես պետք է կազմակերպել, որ այդ ազդեցությունը լինի առավելագույնս դրական և սովորողները դաստիարակվեն հայեցի, նրանց խոսքը զերծ լինի օտարաբանությունից և բարբառային ձևերից:

Երեխայի բառապաշարի վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ հեռուստահաղորդումները: Այդ պատճաով ծնողը պետք է հետևողականորեն ընտրի երեխայի համար նախաեսված ուսուցողական ֆիլմերը, հաղորդումները, մուլտֆիլմները, հեռուստախաղերը և այլն:

Որոշ հեռուստահաղորդումներ ոչ միայն չեն նպաստի աշակերտների խոսքի զարգացմանն ու բազմակողմանի զարգացած մարդու ձևավորմանը, այլև դրանց հետևանքով կխաթարվի նրանց արժեհամակարգը, քաղաքացիական դիրքորոշումների համալիրը և անձնային նկարագիրը:

Շատ հաղորդումներ երբեմն կարող են նպաստել երեխայի բառապաշար թերի զարգացմանն ու խեղաթյուրմանը: Փոքրիկ բառապաշար ունեցող կրտսեր դպրոցականը նոր-նոր է սկսում զարգացնել իր բանավոր խոսքը և, ցավոք, մեծ հաճույքով է դիմում այն հաղորդումները, որոնք զուրկ են գեղարվեստական ճաշակից: Երեխաները շատ շուտ ընկալում և կրկնօրինակում են այդ բառապաշարը: Սակայն մենք պետք է զգուշանանք, որ այդպիսի բառերը տեղ չգտնեն երեխայի խոսքում:

Անշուշտ, բոլորս գիտենք, որ դասագրքերը հարստացնում են սովորողի բառապաշարը: Այդ գործընթացը կատարվում է անընդհատ՝ ընդգրկելով ոչ միայն մայրենիի և ուսումնական մյուս առարկաների ուսումնառությունը, այլև ընտանիքը, դպրոցը, փողոցը, բակը, հեռուստատեցությունը:

Ինչպես գիտենք, մանկական հաղորդումների հիմնական հանդիսատեսը կրտսեր դպրոցի երեխաներն են, դրանք փորձում են լրացնել երեխայի ճանաչողական և ժամանցային դաշտը՝ դրանով ներգործելով նրանց բաապաշարի հարստացման և խոսքի զարգացման վրա:

Հայտնի է,որ հեռուստատեսությունը մեծ ազդեցություն ունի երեխայի բառապաշարի ձևաորման վրա: Ուստի, այսօր խիստ կարևոր է ուսումնասիրել

մանկական հաղորդաշարերի բառապաշարը: Հետևել, որ դրանք համապատասխանեցվեն երեխայի տարիքային առանձնահատկություններին և ինչու չէ, նաև օգնեն կրթական պահանջներին:

Որպես ուսումնական առարկա, դիտարկենք «Երևան» հեռուստատեսության «Մանուկների մոլորակ» մանկական հաղորդաշարը: «Մանուկների մոլորակը» ուսուցողական և ճանաչողական բնույթի հաղոնդում է և ընդգրկում է մի քանի էջ «Ամենագետիկ», «Հանելուկներ», «Քաղաքավարական կանոններ», «Բժշկի անկյուն», «Խոհանոցիկ», «Հմուտ ձեռքեր» և «Հեքիաթների մոլորակ»:

Սրանցից յուրաքանչյուրում իրենց արտացոլումն են գտել դպրոցում դասավանդվող առարկաները: Այսինքն՝ դիտելով հաղորդումը հարստանում է երեխայի բառապաշարը, որը կարող է գործածվել նաև դասերի ընթացքում:

«Ամենագետիկ» էջում երեխաներն ամեն անգամ մի հետաքրքիր տեղեկության են ծանոթանում: Այս էջում օգտագործված բառախմբերը հիմք են հանդիսանում երեխաների գրագետ և գեղեցիկ կապակցված խոսք կառուցելուն: Օրինակ՝ հաղորդումներից մեկում «Ամենագետիկը» ներկայացնում է հեռախոսի ստեղծման պատմությունը:

Երեխաները լսում և սովորում են նորածանոթ հետևյալ բառերը.

Գոյականներ - հեռախոս, Ալեքսանդր, արտոնագիր, կոճակ, հնարավորություն, սարք, երկրագունդ, հեռախոսազանգ, ֆաքս, ազդանշան, բարձրախոս, հոսանք, հեռախոսացանց, հաղորդագրություն, երաժշտություն, ծանոթներ և այլն:

Բայեր - կխոսենք, քնել, վերցնում է, խոսում է, կանչում է, խոսող, չի ներկայացել, լսվում է և այլն:

Ածականներ - մեծ, փոքր, հեռախոսային, կարճ, վիթխարի և այլն:

Մակբայ - ներկայումս, ինչպես, ինչքան, այնքան, այսքան:

Բառակապակցություններ - Ալեքսանդր Բել, ձայնի ալիքներ, թույլ հոսանք, բջջային հեռախոս, հեռախոսային խոսակցություն, ժամանակակից հեռախոս:

Նշված բառերն ու բառակապակցությունները կհարստացնեն կրտսեր դպրոցականների բառապաշարի՝ նրա խոսքը դարձնելով ավելի գունեղ ու արտահայտիչ, իսկ բառակապակցությունները ոչ միայն կուսուցանեն այդ բառերի կապակցելիության հնարավորությունները, այլև որպես խոսքային պատրաստի կաղապարներ, կնպաստեն խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը: Այսպիսի տեքստերը վիթխարի ներգործություն են ունենում հեռուստացաույց դիտող երեխայի գիտական բառապաշարի զարգացման վրա: Գիտական ոճի բառապաշարի

ուսուցման ժամանակ կարևորություն են տալիս նաև հատուկ անունները: Վերը նշված տեքստում հանդիպում ենք նաև հատուկ անունների՝ Զառա, Ալեքսանդր Բել:

Ամենուրեք՝ տանը, դպրոցում, փողոցում պետք է երեխային սովորեցնել քաղաքավարության կանոնները, իսկ հեռուստացույցը լավագույն հնարավորություններից մեկն է, Այն ունի ոչ միայն մեծ լսարան, այլև երեխայի մոտ մեծ վարկանիշ: Հաղորդման այս էջը նպաստում է բառապաշարի հարստացման ու քաղաքավարի հաղորդակցվելու կարողությունների մշակմանը և ընդհանրապես կիրթ խոսք է ձևավորում:

«Մանուկների մոլորակ» հաղորդաշարի «Ամենագետիկը» ներկայացնում է քաղաքավարության կանոնները: Կարևոր է իմանալ, թե ինչպես խոսել հեռախոսով՝ պահպանելով քաղաքավարության կանոնները: Երեխաները լսում և սովորում են: Նրանք կարող են շփվել հեռախոսով իրենց ընկերների, ծանոթների, ինչպես նաև անծանոթների հետ՝ նրանց մոտ թողնելով դրական ազդեցություն:

2. Հանելուկները որպես բառապաշարի հարստացման միջոց

Հանելուկներ գուշակելը մարզում է երեխայի միտքը, նրանք կարողանում են լսածը վերլուծել, համադրել, ճանաչելով առարկաների հատկանիշները, գուշակել տվյալ հատկանիշներն ունեցող առարկան: Հանելուկները բացի ճանաչողական գիտելիքներ հաղորդելուց և տրամաբանական մտածողությունը զարգանալուց, երեխայի մեջ մշակում են նաև ճաշակ չափածո խոսքի նակտմամբ, զարգացնում են ստեղծագործական մտածողությունը:

«Մանուկների մոլորակ» հաղորդաշարի «Հանելուկներ» էջից նորկայացնենք հետևյալ օրինակը:

Լեզու չունի խոսում է,
Ականջ չունի լսում է,
Թե հարկ լինի կհնչի
Եվ քեզ իր մոտ կկանչի:

Բացի այն, որ երեխաները կռահում են հանելուկների պատասխանները, նոանց բառապաշարը համալրվում է մարդու մարմնի անուններով /լեզու, ականջ և այլն/: (20, 17-23)

Հանելուկների ուղղությամբ տարվող աշխատանքները սկսվում են առաջին դասարանից: Հանելուկների միջոցով զարգանում է երեխաների երևակայական մտածողությունը՝ խոսքը դարձնելով տպավորիչ: Հանելուկները հարուստ են համեմատություններով, հակադրություններով, ընդհանրացումներով: Որպեսզի երեխան գուշակի հանելուկի պատասխանը, նա պետք է կարողանա համեմատել, հակադրել, ընդհանրացնել:

Երեխաներին պետք է սովորեցնել, որ հանելուկը պետք է՝

1. Ունենա միայն մեկ պատասխան,
2. Կարճ, հակիրճ լինի,
3. Առարկան կամ երևույթը ներկայացվի տիպուկ բառով,
4. Ունենա բանաստեղծության ձև, լինի չափածո: (11, 190-193)

Այսպիսով, բառը գործածվում է համապատասխան բառակապակցության մեջ՝ ցուցադրելով տվյալ բառերի կապակցելիությունը: Բառը և բառակապակցությունը գործածվում են նախադասությունների մեջ՝ երեխային ներկայացնելով գրագետ և գեղեցիկ խոսք:

«Մանուկների մոլորակ» հաղորդաշարը եթեր արձակված 36 տասնյակից ավելի հաղորդումների ժամանակ անդրադարձել է գործառնական տարբեր ոճերի և իմաստային տարբեր դաշտերի: Հեռուռուստադիտողները հաճախ են նամակներ գրում, պատմություններ հորինում հաղորդման հերոսների՝ Այբի Բենի մասին և ուղարկում նրանց խմբագրություն: Դա մի կողմից նպաստում է աշակերտների մտածողության, կարողությունների զարգացմանը, մյուս կողմից արտացոլում է բառապաշարի հարստացման արդյունքը: Փոքրիկ հեռուստադիտողների նամակների լեզվական և ստեղծագործական մակարդակը ցուցադրում է հեռուստահաղորդման՝ որպես ուսումնական աշխատանքի միջոցի, կարևորությունն ու արդյունավետությունը և ապացուցում մանկական ուսումնական հաղորդումների մեծ ազդեցությունը կրսեր դպրոցականի բառապաշարի հարստացման ու խոսքի զարգացման գործընթացում: (20, 23)

3. Բառազգացողության ձևավորման գործընթացը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ

Բառը մի ամբողջ աշխարհ է իմաստային բազմաթիվ շերտերով, առանցքային էությամբ: Սովորողներին խոսել սովորեցնելիս նախ և առաջ պետք է բառերի զանազան շերտերին ծանոթացնել, բառն զգալու և այն կիրառելու հմտություն ձևավորել: Կրտսեր դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկն էլ առաջին դասարանից սկսած սովորողների մեջ բառազգացողություն ձևավորելն է: Ինչպես կընթանա այդ գործընթացը, մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքով, մեթոդական հմտությամբ, նրանով թե ինչքան սահուն ու անթերի է հաղորդակցում ինքը՝ ուսուցիչը: Շատ կարևոր է, թե ուսուցիչը գոռծընթացը վարելու ի՞նչ մեթոդներ է ընտրում, ի՞նչ հաղորդումներ է առաջադրում, հարցերը հստա՞կ են ձևակերպում արդյոք. չէ՞ որ սովորողը պատասխաններ հնչեցնելու է միտքը բառերով շարադրելով:

Անշուշտ, կրտսեր դպրոցականի բառապաշարը այնքան էլ հարուստ չէ, որ նա կարողանա արտահայտել այն, ինչ մտածում է: Ահա այս դեպքում է, որ ուսուցիչը պարտավոր է գործադրել բոլոր ջանքերը՝ սովորողների առջև բացահայտելու համար բառի գաղտնիքները, բառերի խորությունը, բառի նկատմամբ զգացողությունը: Ուսուցիչը պարտավոր է նաև բացատրել, որ թեև բառերն ունեն հոմանիշներ, միևնույն է, միշտ չէ, որ դրանք խոսքաշարում կարող են գործածվել: Բառերի իմաստային և ճիշտ գործածությամբ կենդանանում են հենց մեր կարևոր մտքերը, անհրաժեշտ բառեր գործածելով, հասկանում ենք խոսակցին: Հանրակրթական դպրոցներում ներկայումս գործող «Մայրենի 2» , / Ա. Քյուրքչյքն, Լ. Տեր-Գրիգորյան/ «Մայրենի», «Մայրենի 4» /Դ. Կյուրջինյան, Ն. Հեքեքյան/ Դասարաններումընդգծված բնագրերը լայն հնարավորություն ե ընձեռում վերը նշված եզրահանգումներն իրագործելու համար:

Երրորդ դասարանում ուսուցիչն ամփոփում է «Ամռան հմայքները» թեման: Ուսուցիչը բազմաթիվ հարցեր է տալիս ամռան տոն՝ վարդավառի, Սևանա լճի, երփներանգ ծաղիկների և Հայաստանի մասին: Աշակերտները բավականաչափ ակտիվորեն մասնակցում են դասին՝ ամբողջական, լիարժեք պատասխաններ տալով ուսուցչի հարցերին: Այնուհետև երգում են տարվա եղանակներին նվիրված մանկական երգ,որում հնչում է տարվա 4 եղանակները: Աշակերտների երգելուց հետո հարց է տրվում նրանց, թե ով որ եղանակին է ծնվել և ամենաշատը որ եղանակն են սիրում:

Պատասխանները լսելուց հետո ուսուցչուհին հասկանում է, որ մեծամասնությունը սիրում է ամառը, որովհետև այս եղանակին կիզիչ արևը ջերմացնում է բոլորին:

Այս երգի միջոցով սովորողները ամփոփ պատկերացումներ են ստանում տարվա եղանակների մասին: Այս մեթոդը կարևոևվում է նրանով, որ երգելիս ևս աշակերտի մեջ տևական է դառնում բառի թրթիռը, բառը մեղեդու միջոցով զգալու և արտաբերելու հմտությունը: Այս առումով աշխատանքը լիարժեք կլիներ, եթե այդ պահին սովորողներն ունկնդրեին Ա. Վիվալդիի «Տարվա եղանակները» ստեղծագործությունից «Ամառ» հատվածը:

«Ինչ էիք զգում, երբ լսում էիք «Ամառ» հատվածը, ապա բառերով փոխարինեցեք այն, ինչ Վիվալդին է զգացել և փոխանցել է մեզ երաժշտության միջոցով»:

Այս աշխատանքն արդյունավետ է նրանով, որ սովորողները «Ամռան հմայքները» թեմայից ստացած գիտելիքները և բառապաշարը կհամադրեն մեկ այլ՝ երաժշտության աշխարհին, ապա սեր կարթնանա դասական երաժշտության նկատմամբ, իսկ այս ամենը դասը կդարձնի առավել նպատակային, և սովորողները կընկալեն բառազգացողություն գործածելու հմտություն:

Արմավիրի մարզի Խորոնք գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանում դասալսումներից մեկիընթացծում ականատես եղանք այսպիսի փաստի. Մայրենիի դասին ամփոփում էին դասագրքի «Մարդն իր գործով է ճանաչվում» թեման: (11, 57-63)

Աշակերտները վերլուծում էին «7 փայլուն աստղերը» և «Մայրենի» բնագրերը, զուգահեռներ անցկացնում դրական հերոսների միջև, նշում նրանց բնութագրող նույն հատկանիշները: Բնագրերը վերլուծելիս սովորողներն ավելի վստահ էին իրենց բնութագրումներում, փորձում էին առավել դիպուկ բառեր ու բառակապակցություններ ընտրել: Այս ամենը նպաստում է բառի ճիշտ դրսևորմանն ու գրագետ խոսք կառուցելուն:

Նույն հակադրությունը կարելիէ հետևողականորեն զարգացնել նաև «Ես և շրջակա աշխարհ»-ը առարկան դասավանդելիս : Ներկա եղա 3-րդ դասարանում՝ « Բույսերն ու կերդանիները ձմռանը» դասին: Հետաքրքիր էր յն պահը, որ սովորողները պատկերացնում էին այն, ինչի մասին խոսում էին: Սակայն առավել հետաքրքիր կլիներ , եթե պաստառի վրա նկար ցուցադրվեր ձմռան պատկերով: Կարելի էր բացատրել, որ լուսամուտ բառը կարող ենք փոխարինել պատուհան բառով: Այս բացատրությունից հետո , սովորողն իմանում է , որ կարող է զուգահոռաբար օգտագործել նաև մյուս տարբերակը՝ բառի հոմանիշը:

Որտեղի՞ց և ինչպե՞ս կարող է սովորողը ընդլայնել և հարստացնել բառապաշրը, սա ևս յուրօրինակ աշխատանք է ՝ միջառարկայական կապ հաստատելով: Շատ կարևոր է դասը

խաղով ընդմիջելը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ խաղերը իմացական բնույթ ունեն: Ես, որպես ուսուցիչ, չեմ պատկերացնում իմ վարած դասերն առանց խաղի, որովհետև խաղի միջոցով ավելի լավ են յուրացնում դասը, նրանց խոսքն առավել սահուն և արտահայտիչ է դառնում, իսկ բառապաշարը՝ ընդգրկուն, հարուստ:

Այս նույն դասի վերաբերյալ կարելի է կատարել ևս մեկ հետաքրքիր նկատառում: Դասանյութի մեջ զետեղված էին հետևյալ կենդանիների անունները՝ արջ, մուկ, գայլ, աղվես, նապաստակ գորտ, մողես:

Ուսուցիչը սովորողների օգնությամբ պատկերացում է տալիս տվյալ կենդանուն բնորոշ բնաձայնությունը՝ մռթմռթոց, ոռնոց, կռկռոց և այլն:

Աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու համար, կարելի է անվանել այդ գործողություններն ու բնաձայնությունները: Օրինակ՝ ի՞նչ է անում գայլը, ոռնում է, ի՞նչ է անում արջը, մռթմռթում է և այլն: Այս աշխատանքը նպաստում է բառապաշարի ընդլայնմանը, նաև բառազգացողության ընկալմանը:

«Բառը մի աշխարհ է, զգույշ վարվեք բառի հետ» - ասել է Մեծն Թումանյանը:

Յուրաքանչյուր ուսուցիչ, կարգախոս դարձնելով Թումանյանական ձևակերպումը, պետք, է սովորած բառերն անընդհատ կրկնել տա սովորողներին, ամենատարբեր ու բազմաբնույթ աշխատանքներով շրջանառության մեջ դնի դրանք, սովորողի մեջ միշտ արթուն պահի նկատմամբ զգացողությունը, միշտ հիշեցնի, որ կա բառերի հեքիաթային աշխարհ, բառերի մելոդակ և տիեզերք, որոնցում ճախրել սովորելու համար անհրաժեշտ է թափանցել բառերի խերքը: Սովորողներին պետք է սովորեցնել իրենց մտքերն արտահայտել գրագետ և սահուն «Ցորենի հատիկը հողում մեռնում է, սակայն ծնունդ է տալիս մի նոր հասկի, բազում հատիկներով մի ոսկեհասկի: Ճիշտ այդպես էլ բառն է, եթե չի դիպչում սովորողի սրտին, չի ծլարձակում նրա հոգում, անհաղորդ է մնում սովորողի զգայական աշխարհին, ուրեմն նա անմասն է մնում շատ կարևոր մի բանից՝ հաղորդակցվելու արվեստից»: (19,179-181)

4. Բառապաշարի զարգացման մեթոդները

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացումը հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրի շուրջ աշխատանքի ժամանակ: Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է հատուկ մեթոդական շղթա: Մայրենիի դասի կարևորագույն խնդիրներից մեկը՝ բառապաշարի հարստացումը իրականացվում է տարբեր եղանակներով: Ուսումնական գործընթացում բառապաշարի հարստացման և կատարելագործման հիմնական աղբյուրը գեղարվեստական ստեղծագործություններն են, ուսումնական գրքերի բնագրերը, ուսուցչի խոսքը:

Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է կազմակերպել գործնական ճանապարհով: Բառային աշխատանքի քայլերն են՝

1. Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում: Սա բառապաշարի հարստացման ակտիվ հնար է:

Այս խնդիրները լուծվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դանց շուրջ տարվող բառակազմական բառաբարդման, վերլուծական, համադրական աշխատանքներով: Օրինակ՝ կարդա, այն բառերը, որոնք օգնեցին քեզ բնութագրել ամռան գույները: Ասա այն բառերը, որոնցով հեղինակը բնութագրել է նապաստակն: Ո՞ր բառերն են քեզ հուշու, որ ամառ է:

Բառիմաստի բացատրության հնարներն են.

ա/ բառի բացատրություն՝ ցուցատրելով համապատասխան առարկան,

բ/ բառի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով, օրինակ՝ վաղ գարուն բառակապակցությունը բացառել՝ վաղ գարնանային բնությունը պատկերող նկար ցույց տալով կամ, եթեդրսում գարուն է, հենց այդ պատկերը ցուցադրելով,

գ/ բառի ստուգաբանում, որի ժամանակ բառիմաստը բացատրվու է բառակազմական վերլուծության ճանապարհով,

դ/ բառի բացատրություն այլ՝ իմաստով մոտ բառերի օգնությամբ,

ե/ բառի բացատրություն իմաստային մեկնաբանությունների միջոցով, օրինակ՝ հերոս-մարդ, ով բոլորից տարբերվում է իր քաջ, անվախ արարքներով,

զ/ բառի բացատրություն՝ հականիշների և համանիշների միջոցով,

ե/ բառի բացատրություն՝ նկարելով:

2. Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտում է անծանոթ բառի նշանակությունը:

Տարրական դասարաններում տրվում է այսպիսի հարց. «Ո՞ր բառերից է կազմվել այս բառը», «Ինչու՞ են անվանվել այսպես «երկնակամար»: Բառերի բացատրության այս եղանակը բառային աշխատանքի ուղղագրության հետ կապեր ստեղծելու հնարավորություն է տալիս, քանի որ այդ դեպքում բացահայտվում են բառերի արմատները՝ նպաստելով դրանց ուղղագրության յուրացմանը:

3. Բառերի համեմատում՝ գրիչ, գրչատուփ, բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով, որը ստեղծվում է նույնարմատ բառերի իմաստների սահմանազատման հնարավորություն:

4. Բացատրություն կռահման ճանապարհով: Ուսուցիչը կարդում է անծանոթ բառ պարունակող նախադասություն և հարցնում է աշակերտներին: «Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է նշանակել այս բառը»:

5.Նորածանոթ բառերի բացատրություն ՝ տեղեկատվական նյութերի միջոցով. Այսինքն ՝ բառարաններով, դասագրքի տողատակում կամ հավելվածում տրված բացատրություններով և այլն: Բառերի բացատրման այս ձևը երեխաներին դուր է գալիս: Նրանք ոչ միայն սիրով են աշխատում, այլև օգտվում են բառարանից:

Բառարաններով աշխատելիս սովորողները, կարդում են ոչ միայն իրենց հանձնարարված բառարանային հոդվածը, թերթում են այլ էջեր, փնտրում իրենց հետաքրքրող այլ բացատրություններ, այսինքն սկսում են աշխատել բառարաննրոերով:

6. Առարկայի, նկարի, մակետի, խրդվիլակի կամ գործողության ցուցադրումը կնպաստի սովորողների ճանաչողական ակտիվության զարգացմանը, եթե այդ գործընթացին նրանք մասնակցում են իրնքուրույնաբար և ստողծագործաբար, իմաստը բացատրող բառերն ընտրել են իրենք, նկարել են ինքնուրույն՝ առանց ուսուցչի կամ ծնողի մասնակցության, պատմում են, թե ինչ պետք է նկարեն, ինչ գույներ պետք է օգտագործեն և այլն:

7. Հականիշ զույգերի ընտրություն, բարձր-ցածր, մեծ-փոքր, վերև-ներքև և այլն: Բառիմաստի բացատրության այս ձևը բառապաշարի հարստացման, ուղղագրական և ուղղխոսական կարողության զագացման միջոց է:

8. Մեկնաբանող նկարագրություն. այս հնարն արժեքավոր է նրանով, որ ստեղծում է անկաշկանդ զրույցի հնարավորություն: Երեխաները փորձում են ինքնուրույն խոսք կառուցել՝ բացատրելով այս կամ այն աբառի իմաստը: Տարրական դպրոցի աշակերտները

խախտում են նկարագրությունները վերարտադրելուց, որովհետև այն հարուստ է՝ ածականներով, մակդիրներով, համեմատություններով, որոնք հարստացնում են խոսքը:

9. Որպեսզի հաջողությամբ լուծվի այս խնդիրը, ուսուցիչը պետք է ուղղորդի , որ սովորողները պատմելիս, խոսելիս գործածեն ոչ միայն ածականներ, այլ նաև բայեր, գոյականներ, մակբայեր, համեմատություններ, փոխաբերություններ և ամբողջությամբ վերարտադրեն կարդացած ստեղծագործության մեջ զետեղված նկարագրությունները: Շահեկան է կարդացած բնագրի նկարագրական հատվածների շուրջ տարրաբնույթ աշխատանքների կատարումը: Օրինակ՝ նկարել պատմվածքում ներկայացված տեսարանը, համեմատել ընթերցած նկարագրությունը նույն հեղինակի այլ ստեղծագործության մեջ ներկայացված տեսարանին, որոշել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, դրանք « Նկարել բառերով » և այլն :

10. Բառային աշխատանքի փուլի հաջորդ խնդիրն է ուստուգել , թե արդյոք սովորողները հասկացել են կարդացած բառերի իմաստը և կարող են գործածել խոսքում: Այդ նպատակով առաջին հերթին պիտի առաջարկել բառերը գործածել բառակապակցությունների, նախադասությունների կապակցված խոսքի մեջ: Այս հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ գործածելու, այլ բառերի հետ կապակցություններ ստեղծելու կարողությունների ձևավորմանը: Այս ուղղությամբ հանձնարարվող առաջադրաքները պետք է ձևակերպել այնպես, որ սովորողները բառերը ոչ թե պարզապես գործածեն խոսքում, այլև իրականացնեն մտավոր որոշ գործողություններ:

Օրինակ՝ որոշի՝ր այն բառը, որով կարելի է բնութագրել պատմվածքի հերոսին: Պատմվածքի հերոսին կարելի է բնութագրել «անվախ» բառով՝ «անվախ որսորդ»: Դրա օգնությամբ կազմիր մի այնպիսի բառակապակցություն , որը կարող է դառնալ պատմվածքին վերնագիր: Օրինակ՝ «Անվախ որսորդ», «Կխտարի ձագը»: Պատմվածքում որոշիր և կարդա այն բառերը, որոնք վերաբերվում են մայր կխտարին և նրա ձագին: / 11, էջ 278/ Գորկածածելով այդ բառերը՝ նկարագրիր կխտարի ձագին ՝ «նիհար ձագուկ», «բարակ ձագուկ», «քաղցած ձագուկ»: Սա բառապաշարի հարստացման մի ուղի է, որի դեպքում նաև պարզ է դառնում, թե սավորողներն արդյոք հասկանում են բառի իմաստն ըստ ամենայնի և կարող են նորածանոթ բառերը գործածել խոսքում՝ ըստ դրանց նրբերանգների:

Եզրակացություն

Ամփոփելով ավրտական աշխատանքում իմ կողմից ներկայացված տեսական և գործնական նյութը տարրական դասարաններում բառապաշարի հարստացման վերաբերյալ՝ ես եկել եմ մի շարք եզրահանգումների՝

- Սովորողների հետազոտական գործունեության հաջողությունը պայմանավորված է ուսուցչի ճիշտ և իմաստալից աշխատելաոճից: Հետազոտական աշխատանքի ժամանակ ուսուցիչը ոչ թե գիտելիք է հաղորդում, այլև նրանց ուղղորդում և օգնում է հետազոտական աշխատանքը նպատակին հասցնելու համար:
- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բառապաշարի հարստացման միջոց կարող են դառնալ հեռուստահաղորդումները, սակայն վերապահումով, որոշ հեռուստահաղորդումներ դրական ազդեցություն են թողնում և շատերն էլ՝ բացասական:
- Սովորողների բառապաշարի հարստացումը պայմանավորված է ճանաչողական և տրամաբանական մտածողությամբ, որին կարելի է հասնել հանելուկների գուշակման միջոցով:
- Տարրական դասարաններում բառապաշարի համալրումն ու հարստացումը տեղի է ունենում բառակազմական վերլուծության, արմատների ու ածանցների միջոցով նորանոր բառեր կազմելով:
- Ուսումնական գործընթացում բառապաշարի հարստացման և կատարելագործման հիմնական աղբյուրներն են՝ ուսուցչի գրագետ խոսքը, գեղարվեստական ստեղծագործությունները, ուսումնական բնագրերը:

Կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման չափանիշներն են՝ կարդալու որակական հատկանիշները՝ ճիշտ կամ անսխալ կարդալ, գեղարվեստական կամ արտահայտիչ կարդալ, արագ կարդալ:

Ուսումնասիրությունների արդյունքներից եզրակացրեցի, որ բառարանները ևս բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման միջոց են:

Սովորողների բառապաշարի ակտիվացմանը նպաստում են ակտիվ խաղերը: Հետազոտական աշխատանքի խաղերը պիտի լինեն ակտիվացնող և շահագրգռող:

Գրականություն

1. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Մայրենի 3»: Հանրակրթական դպրոցի դասագիրք:
2. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Մայրենի 4»: Հանրակրթական դպրոցի դասագիրք:
3. Ջ. Հ. Գյուլամիրյան՝ «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա» «Զանգակ» հրատարակչություն:
4. Ջ. Հ. Գյուլամիրյան՝ «Կարդալու կարողությունը և խոսքի զարգացումը տարրական դասարաններում»:
5. Ջ. Հ. Գյուլամիրյան՝ «Խաղալով սովորենք»: Եր. «Զանգակ-97»:
6. Ս.Գ. Աբրահամյան՝ «Աշակերտի խոսքի զարգացումը»:
7. Վ.Ներսիսյան՝ «Բառակազմական համառոտ ուղեցույց-բառարան»:
8. Ա.Ծ. Տեր-Գրիգորյան՝ «Հայոց լեզվի մեթոդիկա» (տարրական դասարաններ)
: